

---

## ԿՊԱՐՁՔԻ ԵՎ ՍԱՄՑԽԵՒ՝ IX ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐԱ

### ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կղարջքի Աշոտ կուրապաղատի իշխանության շրջանից (VIII դ. վերջ - 826) սկսած՝ Կղարջքի կուրապաղատությունում լայն ծավալներ է ընդունում Եկեղեցիների և վաճքերի շինարարությունը, որի սկզբնավորողը հետագայում տեղի հոգևոր առաջնորդի դերը ստանձնած Գրիգոր Խանձրեցին էր (759-861): Այդ մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել Գեորգի Սերչուլի կողմից X դ. կեսերին գրի առնված «Գրիգոր Խանձրեցու վարք»-ում<sup>1</sup>: Կղարջքում ծավալված Եկեղեցաշինական աշխատանքներից հետո տեղի հոգևորականները սկսում են իրենց ազդեցությունը տարածել հարևան Սամցխեում: 860-ական թթ. հենց այդ նպատակով այնտեղ է ուղարկվում Սերապիոն Զարզմեցին: Այդ մասին կարևոր հիշատակարաններ կան X դ. առաջին կեսին Վասիլ Զարզմեցու գրի առած «Սերապիոն Զարզմեցու վարք»-ում<sup>2</sup>:

Դատելով Գեորգի Սերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձրեցին Կղարջքի կուրապաղատությունում կառուցել կամ վերակառուցել է տասնյակ վաճքեր ու Եկեղեցիներ<sup>3</sup>: Նա սկզբում Խանձրայում փայտաշեն Եկեղեցի կառուցեց<sup>4</sup>, որը դարձավ նրա նստավայրը և Կղարջքի կուրապաղատության գլխավոր հոգևոր կենտրոնը:

Խանձրա վաճքի շինարարության ժամանակ Կղարջքում իշխում էր Աշոտ կուրապաղատը<sup>5</sup>: Իր մի իշխանից իմանալով Գրիգոր Խանձրեցու մասին՝ կուրապաղատն իր մոտ հրավիրեց նրան<sup>6</sup> և նվիրեց բարեբեր տարածքներ, այդ թվում՝ Շատրերոի շրջանը<sup>7</sup>: Երբ Կղարջքի կուրապաղատը սկսեց հովանավորել Գրիգոր Խանձրեցու Եկեղեցաշինական գործունեությունը, այն ամբողջ Կղարջքում լայն ծավալներ ընդունեց<sup>8</sup>: Գրիգոր Խանձրեցու հիմնած վաճքերի և Եկեղեցիների աշխարհագրությունը վկայում է, որ այն ընդգրկում էր միայն Կղարջքը: Այդ իսկ պատճառով նրան ուզում էին կարգել Կղարջքի վաճքերի և Եկեղեցիների (Խանձրա, Շատրերդ,

<sup>1</sup> Տե՛ս Գեօրգի Մերչուլե. Ժիտie Св. Григория Хандзтийского. Грузинский текст, введение, издание, перевод Н. Марра // «Тексты и разыскания по армяно-грузинской филологии». Т. VII. СПб., 1911, № 83-151:

<sup>2</sup> Տե՛ս Վասիլի Զարզմելի, Ժիտие Серапиона Зарзмели // «Памятники древнегрузинской агиографической литературы». Тб., 1956, «Древнегрузинская литература (V-XVIII вв.)». Тб., 1987:

<sup>3</sup> Տե՛ս Գեօրգի Մերչուլե, գլ. V, IX:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. VII:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. IX:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. X:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XI:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. X:

Միջնածոր և այլն) հոգևոր առաջնորդ: Վիճակն այդպիսին էր նաև Բագարատ կուրապաղատի (826-876) որդու՝ Դավիթի օրոք (876-881), երբ կառուցվեց Խանձրայի քարաշեն Եկեղեցին<sup>9</sup>: Արխազաց թագավորին նկարագրելով Կղարջի վանքերն ու Եկեղեցիները՝ Գրիգոր Խանձրեցին մասնավորապես պատմում է, որ դրանք մի կողմից սահմանակցում են Արխազաց թագավորությանը Ղաղո (Մոսքական Լեռների շրջանում) կոչվող լեռներով, իսկ մյուս կողմից շրջապատված են Շավշեթի մեծ գետերով: Ընդհանրապես, Գրիգոր Խանձրեցու կառուցած կամ վերակառուցած վանքերին ու Եկեղեցիներին Գեորգի Մերչուլի տված «Կղարջի մենաստաններ» անվանումն արդեն իսկ խոսում է այն բանի օգտին, որ դրանք բոլորը գտնվում են Կղարջքում<sup>10</sup>: Չարկ է նշել, որ Գրիգոր Խանձրեցու հոգևոր իշխանության սահմանները պետք է նույնական լինեին Կղարջի կուրապաղատությանը, քանի որ նրան գործունեության հնարավորություն էր տվել Կղարջի Աշոտ կուրապաղատը: Դատելով վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատի հաղորդած տեղեկություններից՝ Կղարջի Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր «Շավշեթի և Կղարջի վրա»<sup>11</sup>: Յեղինակը այնուհետև տեղեկացնում է, որ Աշոտի տիրություններն են Շավշեթը, Կղարջը և Նիգալը<sup>12</sup>: Ուսումնասիրողներն արդեն ապացուցել են, որ Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր միայն Կղարջքում<sup>13</sup>:

Գրիգոր Խանձրեցու և նրա մերձավորների կառուցած կամ վերակառուցած Եկեղեցիների թվում թացարություն էր կազմում միայն իշխանի Եկեղեցին, որը գտնվում էր Տայքում: Ըստ Գեորգի Մերչուլի՝ այն վերակառուցվել է Գրիգոր Խանձրեցու շրջապատի հոգևորականներից Սաբանի կողմից<sup>14</sup>: Վերջինս, հաստատվելով Իշխանի Եկեղեցում, դադարեց Ենթարկվել Կղարջի կուրապաղատին: Երբ կուրապաղատն իր նոտ է հրավիրում Սաբանին, նա մերժում է, իսկ երբ, այնուամենայնիվ, ընդունում է Գրիգոր Խանձրեցու հրավերը, Բագարատ կուրապաղատի այն հարցին, թե նա ինչու չընդունեց իր հրավերը, պատասխանում է, որ Ենթարկվում է միայն Յիշուս Քրիստոսին<sup>15</sup>: Սա վկայում է, որ Իշխանի Եկեղեցու տարածքը Ենթակա չէր Կղարջի կուրապաղատին, քանի որ Սաբանն ի սկզբանե դուրս էր Եկել Կղարջից և հայտնվել Տայքում, ուստի դադարեց Ենթարկվել Կղարջի կուրապաղատին: Ինչ վերաբերում է Գրիգոր Խանձրեցու հրավերին արձագանքելուն, ապա դրա պատճառն այն էր, որ վերջինիս հոգևոր ավագությունը Սաբանը դեռ ընդունում էր: Այդ դեպքից հետո Բագարատ կուրապաղատը Գրիգորի և Սաբանի հետ անձանք այցելեց Իշխան: Յետագայում Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս<sup>16</sup>:

<sup>9</sup> Տես նույն տեղը, գլ. XXVIII:

<sup>10</sup> Տես նույն տեղը, գլ. XXII:

<sup>11</sup> Сymbat Davitis-ձե Իстория и повествование о Багратионах. Тб., 1979, с. 31.

<sup>12</sup> Տես նույն տեղը, էջ 31-32:

<sup>13</sup> Տես Յ. Մարկուարոն, Յայ Բագրատունեաց ծիւլագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարոտ, գերմաներէնէ թարգմանեց Յ. Ս. Յապողեան, Վիեննա, 1913, էջ 138, Յ. Ալոնց, Երկեր, հ. Ա, Եր., 2006, էջ 504:

<sup>14</sup> Տես Գеорգий Мерчүле, գլ. V:

<sup>15</sup> Տես նույն տեղը, գլ. XIV, XXVI:

<sup>16</sup> Տես նույն տեղը, գլ. XXVI:

Մեր կարծիքով, այս ամենի պատճառն այն իրողությունն էր, որ Տայքը պատկանում էր Հայոց իշխան Աշոտ Մսակերին (804-826)<sup>17</sup>, ուստի իշխանի Եկեղեցուն հաստատված Սաբանը Ենթարկվում էր նրան, սակայն, լինելով քաղկեդոնական, ընդունում էր Գրիգոր Խանձրեցու հոգևոր իշխանությունը:

Պետք է նշել, որ Գրիգոր Խանձրեցու գործունեության շրջանում քաղկեդոնիկ Եկեղեցին նաև Հայոց իշխան Աշոտ Մսակերին քաղկեդոնական դավանանքի հետևորդ դարձնելու փորձ էր կատարել, իսկ հաջողվելու դեպքում՝ անշուշտ կցանկանար քաղկեդոնականությունը տարածել որոշ Հայաստանում: Դատելով Մխիթար Այրիվանեցու և Վարդան Վարդապետի տեղեկություններից՝ քաղկեդոնականներն իրենց նպատակներում որոշ հաջողության հասել էին, սակայն Միջազգետքից ժամանած մի միարնակ վանական դավանաբանական վեճում հաղթում է քաղկեդոնիկ հոգևորականին, որից Եկեղեցու դավանանքում ու Երկրից վտարում է քաղկեդոնիկ հոգևորականին<sup>18</sup>:

Մինչև Գրիգոր Խանձրեցու Եկեղեցաշինությունը Կղարջքի հոգևոր կենտրոնը Արտանուժի Սբ. Պետրոս-Պողոս Եկեղեցին էր, որը կառուցել է Աշոտ կուրապաղատը IX դ. սկզբին՝ Արտանուժի բերդի վերականգնումից անմիջապես հետո: Եկեղեցուն նա կառուցել էր նաև իր անձնական դամբարանը<sup>19</sup>: Ըստ Վախուչտի Բագրատիոնիի՝ կուրապաղատը սպանվել է այդ Եկեղեցում<sup>20</sup>:

Նախքան Գրիգոր Խանձրեցու գործունեությունը Կղարջքում գործում էր նաև Օպիզայի վանքը: VIII դ. վերջին այնտեղ որոշ ժամանակ ապրել է Գրիգոր Խանձրեցին: Ըստ Գեղրդի Մերչուլի՝ այն ժամանակ, երբ Գրիգոր Խանձրեցին զալիս է Կղարջք, այստեղ, բացի Օպիզայից, որևէ այլ գործող վանք կամ Եկեղեցի չի եղել<sup>21</sup>: Ըստ «Սերապիոն Զարզմեցու Վարք»-ում պահպանված մի տեղեկության՝ Օպիզայի վանքը IX դ. կեսերին Կղարջքի հոգևոր կենտրոններից մեկն էր<sup>22</sup>: «Քարթլիի մատյան»-ի տեղեկության համաձայն՝ այն վերակառուցվել է նաև Կղարջքի Բագրատունիներից Գուառամի օրոք: Վերջինս թաղվել է վանքի գերեզմանատանը<sup>23</sup>:

<sup>17</sup> Տե՛ս Վարդան Վարդապետ, էջ 83:

<sup>18</sup> Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն Հայոց»: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 53, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 84:

<sup>19</sup> Տե՛ս Ծմբատ Դավիտս-ձե, էջ 31:

<sup>20</sup> Տե՛ս Վախուտի Բագրatiони. Իстория царства Грузинского, пер. Н. Накашидзе, Тб., 1976, էջ 187: «Քարթլիի մատյան»-ի հաղորդած տեղեկության համաձայն՝ Աշոտ կուրապաղատը սպանվել է Գարդարանի Եկեղեցում (տե՛ս «Матиане Картлиса». Тб., 1976, էջ 29): Պետք է նշել, որ վրաց պատմաբանների համար ընդունելի է հենց այս տեղեկությունը, որի հիման վրա նրանք փորձում են ցույց տալ, թե Աշոտ կուրապաղատը տիրել է նաև Գարդարանին (տե՛ս «Очерки истории Грузии». Т. II. Тб., 1988, էջ 308-309): Դատելով Դավթի որդի Սմբատի տեղեկություններից՝ Աշոտ կուրապաղատը սպանվել է Շավշեթի Եկեղեցիներից մեկում, երբ զինվորներ հավաքագրելու նպատակով մեկնել էր այնտեղ (տե՛ս Ծմբատ Դավիտս-ձե, էջ 31-32):

<sup>21</sup> Տե՛ս Գеоргий Մերչուլ, գլ. VII:

<sup>22</sup> Տե՛ս Վасилий Зарзмели, գլ. XV:

<sup>23</sup> Տե՛ս «Матиане Картлиса», էջ 32:

Խանձրա վանքի կառուցումից հետո Կղարջի Անչայի վանքի շրջանում գտնվող գյուղերի բնակիչները թալանելու և ավերելու նպատակով հարձակվեցին վանքի և հարակից գյուղերի վրա: Այդ ժամանակ Տփղիսի ամիրա Սահակի օգնությամբ Անչայի Եպիսկոպոս էր դարձել ոմն Ցկիր, որն էլ կազմակերպել էր հարձակումը Խանձրա վանքի վրա: Ցկիրի մահվան պատճառով այդ հարձակումները դադարեցին<sup>24</sup>: Որոշ պատճարաններ թեև փորձել են այդ իրադարձությունը վերագրել միջավատատիրական հարաբերությունների սրմանը<sup>25</sup>, սակայն, մեր կարծիքով, այդ փաստը ցույց է տալիս, որ Կղարջի որոշ շրջաններում, այդ թվում՝ Անչայի վանքի շրջակայքում, չեն ընդունում Գրիգոր Խանձրեցու հոգևոր իշխանությունը: Ուստի, երբ Գրիգոր Խանձրեցին ցանկացել է այնտեղ տարածել իր հոգևոր իշխանությունը, նման հակահարված է ստացել: Գեորգի Մերչովի մի հաղորդումից պարզվում է, որ Կղարջի Անչայի վանքն իր թեմով վրաց Եկեղեցու համակարգում հատուկ կարգավիճակ ուներ<sup>26</sup>, և դրա հովանավորը, ինչպես տեսանք, Տփղիսի Սահակ ամիրան էր, որ գործում էր ընդդեմ Խանձրա վանքի հոգևոր իշխանության:

Պետք է նշել, որ, ըստ Գեորգի Մերչովի հաղորդումների, Գրիգոր Խանձրեցին սկզբնական շրջանում իրավասու էր միայն այն վանքերի և Եկեղեցիների նկատմամբ, որոնք կառուցվել կամ վերակառուցվել էին իր հովվապետության օրոք: Այսպես, նա Օպիզայի վանքն ու նրա քահանային համարում էր իրեն ոչ Ենթակա<sup>27</sup>: Այդ իրողության պատճառը, թերևս, այն էր, որ Աշոտ կուրապաղատից հետո, երբ նրա տիրույթները բաժանվեցին նրա երեք որդիների միջև<sup>28</sup>, նրանցից Գուառամ Բագրատունին, որը տիրում էր այդ վանքի շրջակա տարածքներին, հաշվի չեր նստում Կղարջի հոգևորականների հետ<sup>29</sup>:

Դատելով այն իրողությունից, որ Գրիգոր Խանձրեցու հաստատվելու շրջանում Կղարջի պատճենը, բացի Օպիզայից, այլ գործող վանք չկար, իսկ հետագայում Միջնածորի վանքը դարձել էր կուրապաղատության կարևոր վանքերից մեկը<sup>30</sup>, պետք է եզրակացնել, որ այն, ի թիվս Խանձրա վանքի շրջակա հին վանքերի և Եկեղեցիների, IX դ. սկզբին վերակառուցվել էր Գրիգոր Խանձրեցու կողմից:

Շատրվարի վանքը ևս վերակառուցվել է Գրիգոր Խանձրեցին և Խանձրայի հետ միասին դարձրել իր հոգևոր իշխանության երկու կարևոր վանքերից մեկը: Վանքի վերակառուցման ընթացքում Գրիգոր Խանձրեցին խմբուց Աշոտ կուրապաղատի որոի Բագրատին, որ նա օգնություն տրամադրի շինարարությանը: Ի պատասխան, կուրապաղատը կալվածքներ նվիրեց վանքին<sup>31</sup>: Վերջինիս մեջ նվիրատվություններ կատարեցին նաև Կղարջի մյուս իշխանները<sup>32</sup>:

<sup>24</sup> Տե՛ս Գեորգий Մերչուլե, գլ. LXVIII-LXX:

<sup>25</sup> Տե՛ս «Очерки истории Грузии», т. II, էջ 244-245:

<sup>26</sup> Տե՛ս Գեորգий Մերչուլե, գլ. XLII:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XXXIV:

<sup>28</sup> Տե՛ս Վախուտի Բագրatiոնi, էջ 187:

<sup>29</sup> Տե՛ս Գեորգий Մերչուլե, գլ. XLII:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XXVII, XXVIII, XXXI և այլն:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XXV:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XXVII:

Ըստ Գեղրդի Մերչուլի հաղորդումների՝ Կղարջքում կային առաքելական հայեր: Յենց նրանց մասին է հարցնում Օպիզայի վաճքի վանահայրը Գրիգոր Խանձրեցուն, թե արդյոք հարկ է կնքել հերետիկոսների (իմա՝ հայապահնների) զավակին, եթե նա ցանկանում է դառնալ ուղղափառ: Գրիգոր Խանձրեցին պատասխանում է, որ Պողոս առաքյալը նույնպես դավանանքը առաքյալների անուններով կոչելը սիսալ էր համարում (նկատի ունի հայադավանների՝ առաքելական կոչվելը): Յերետիկոսները, ըստ Գրիգոր Խանձրեցու, հեռացել են մայր կաթոլիկ-առաքելական Եկեղեցուց, և նրանց զավակներին հարկ է կնքել<sup>33</sup>: Դեռևս Ն. Մաօրը, հետազոտելով վրացական աղբյուրները, հաճգել է այն համոզման, որ X դ. կեսերին վրացերենը Կղարջքում բնակչության լեզու չէր, այլ օգտագործվում էր միայն Եկեղեցական արարողությունների ժամանակ<sup>34</sup>: Կղարջքի բնակչության լեզուն հայերենն էր<sup>35</sup>: Այնուհետև Ն. Մաօրը, հիմնվելով վրացական աղբյուրների վրա, նշում է, որ IX-X դդ. վրաց հոգևորականները Կղարջքում շրջապատված էին թեև քաղկեդոնական դավանանք ունեցող, բայց հայ բնակչությամբ<sup>36</sup>: Բացի այդ, որոշ տվյալների համաձայն, Կղարջքում՝ Արտանուցի մոտ գտնվող Տանձոտ բնակավայրում, XI դ. կեսերին (1059 թ.) բնակվում էին լուսավորչական հայեր<sup>37</sup>:

Թեև մինչև այսօր խնդրո առարկա շրջանում Սամցիսի հշխանությունների գոյության մասին գիտական գրականության մեջ գրեթե չի խսվել, սակայն փաստերը մեզ այն համոզմանն են բերում, որ IX դ. Սամցիսում սկսում են ձևավորվել առանձին հշխանություններ, որոնք X դ. 40-ական թթ.՝ Հայոց Աբաս թագավորի օրոք, հանդես են գալիս որպես մեկ թագավորություն<sup>38</sup>:

Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հայոց 774-775 թթ. ապստամբությունից հետո Կղարջքում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ալորներսեհը ի թիվս այլ շրջանների տիրում էր նաև Սամցխեին<sup>39</sup>, քայլ Վերցինս դուրս էր մնացել նրա որդի Աշոտ Կուրապաղատի տիրույթներից<sup>40</sup>: Սակայն Վախուշտի Բագրատիոնին, անդրադառնալով Աշոտի որդիների տիրույթներին, մասնավորապես Սամցխեն հիշատակում է որպես Բագրատի տիրույթ<sup>41</sup>:

<sup>33</sup> Տե՛ս Առաջ պետք. զլ. LXXV:

<sup>34</sup> Ըստ Գերողի Մերչովու հայորդումների՝ Գրիգոր Խանճեցու մշակած բանաձևի համաձայն՝ Վրաստան էր համարվում այն երկիրը, որտեղ եկեղեցական ծառայությունն իրականացվում և աղոթքներ կատարվում էին վրացերեն (տե՛ս նույն տեղը, զլ. XLIII):

<sup>35</sup> Տես նույն տեղը, էջ XVI:

<sup>36</sup> Стю Марр Н. Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах // «Византийский временник». Т. XII, 1906, вып. 1-4, № 22.

<sup>37</sup> Ст. З. Фишерիկյան. Եւ

Հայոց Ի. Պարուիքան, Ծագումը բարեկալվ (1955 թ.), ոլոված է այս տաճի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուրը, «Բանբեր մատենադարանի», 1960, թիվ 5, էջ 411-413: Այս խնդրին անդրադարձել են նաև այլ հեղինակներ (տե՛ս S. Մարության, Դայ դասական ճարտարապետության ակունքներում (Դայաստանի և Վրաստանի վաղ միջնադարյան հուշարձաններ), Եր., 2003, նույնի՝ Դայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Դայը, Եր., 1978, Տօքարսկի Ն. Արхитектура древней Армении. Ер., 1946):

<sup>38</sup> Stū Masudi, Muruj az-zahab ua maadin al-javahir, al-Kahira, 1948, I, tq 204:

<sup>39</sup> Ст. «Матиане Картлиса», № 28-29:

<sup>40</sup> Стю Сумбат Давитис-дзе, № 31:

<sup>41</sup> Ст. Вахушти Багратиони, № 187:

Մյուս կողմից, հայտնի է, որ Սամցխեում գտնվող երեք բերդ՝ Օձրխեն, Զվարիսխեն և Լոնսիանթան, կառուցել էր Գուառամ Բագրատունին<sup>42</sup>: Կարելի է բխեցնել, որ Սամցխեի՝ Արխազաց թագավորությանը հարևան մի հատվածը՝ Վերոհիշյալ երեք բերդերով, մտնում էր Գուառամ Բագրատունու տիրույթների մեջ: Այդ իսկ պատճառով, երբ Գուառամը Զավախքում Եկեղեցական ժողով գումարեց՝ քննարկելու Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը, Կղարջքից որևէ հոգևորական չիրավիրեց: Ժողովին հրավիրվել էին Սամցխեի հոգևորականները, որոնք նույնպես դժգոհ էին Արսենի՝ կաթողիկոս դառնալու փաստից<sup>43</sup>.

IX դ. առաջին կեսին՝ Կղարջքում ծավալված Եկեղեցաշինական աշխատանքներից հետո՝ Բագարատ կուրապաղատի օրոք, փորձ է կատարվում Կղարջքի հոգևոր իշխանությունը տարածելու Սամցխեում՝ այնտեղ ուղարկելով մի խումբ հոգևորականների՝ Սերապիոն Զարզմեցու գլխավորությամբ: Ըստ Վասիլ Զարզմեցու՝ Սամցխեի տարբեր շրջաններում Կղարջքի հոգևորականներին թշնամաբար էին ընդունում և արտաքսում իրենց երկրամասերից: Երբ նրանք նոր էին մտել Սամցխե և կառուցել առաջին վանքը, տեղի իշխանը չցանկացավ նրանց տեսնել իր տիրույթներում և վտարեց<sup>44</sup>: Ամենայն հավանականությամբ այդ իշխանությունը սահմանակից էր Կղարջքի կուրապաղատությամբ: Սակայն Սամցխեի մյուս իշխաններից Գեորգի Չորչանեցին (Չորչան բնակավայրն այսօր էլ գոյություն ունի և գտնվում է ներկայիս Ախալցխա քաղաքից արևմուտք՝ Կուր գետի՝ Մոսքական լեռներից սկիզբ առնող վտակի ափին) նրանց հրավիրեց իր մոտ և իր իշխանության մեջ գործունեության ազատություն տվեց<sup>45</sup>: Գլխավոր վանքը, որ Կղարջքի հոգևորականները կառուցեցին Սամցխեում, Զարզմայի վանքն էր<sup>46</sup>: Այնուհետև Կղարջքի հոգևորականները կառուցեցին Ղվելի վանքը<sup>47</sup>: Սակայն, երբ Գեորգի Չորչանեցու մահից հետո նրա իշխանության մեջ երկպառակություններ սկսվեցին, հարցը կառողացավ լուծել միայն Սամցխեի Ածղուր վանքի հոգևոր առաջնորդ Գեորգին, որը դրանից հետո կարողացավ իր ձեռքը վերցնել Սամցխեի հոգևոր ղեկավարությունը<sup>48</sup>: Ածղուրը Սամցխեի եպիսկոպոսամիստ վանքն էր, որը, դատելով Վերոհիշյալից, խնդրու առարկա շրջանում դուրս էր Կղարջքի հոգևոր իշխանությունից և ավելին՝ երեմն հակադրվում էր նրան: Գեորգի Սերչուլի հաղորդումներից հետևում էր, որ Սամցխեի հոգևորականների կարծիքը կարևոր նշանակություն ուներ նույնիսկ Վրաց կաթողիկոսի ընտրության հարցում<sup>49</sup>: Մյուս կողմից, Սամցխեի հոգևորականները չեին ընդունում նաև Գրիգոր Խանձրեցու իշխանությունը: Երբ քննարկվում էր Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը, Կղարջքի Բագրատունիներից Գուառամն ու Բագրարատը դժգոհ էին նրա՝ կաթողիկոս դառնալու

<sup>42</sup> Տե՛ս «Մատիան Կարտլիս», էջ 32, Վախուտի Բագրատիոն, էջ 187-188:

<sup>43</sup> Տե՛ս Գеорգий Մերչուլե, գլ. XLII:

<sup>44</sup> Տե՛ս Վասիլիй Զարզմելի, գլ. V:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. VI-VII:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. VIII-XIII:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XVI:

<sup>48</sup> Տե՛ս նույն տեղը, գլ. XVIII:

<sup>49</sup> Տե՛ս Գеорգий Մերչուլե, գլ. XLII:

փաստից: Միևնույն ժամանակ, դրան կողմ էր Գրիգոր Խանձրեցին<sup>50</sup>: Այս փաստերը ցույց են տալիս, որ Սամցխեն Բազարատի տիրույթների մեջ չեր մտնում, կամ, ավելի ստույգ, Բազարատի տիրույթների մեջ էր մտնում միայն Սամցխեի մի փոքրիկ մասը՝ վերը նշված երեք բերդ:

Անդրադառնալով Գեորգի Չորչանեցու իշխանությանը՝ հարկ ենք համարում նշել, որ, դատելով վերոասացյալից, այն չէր մտնում Կղարջքի կուրուապաղատներից և ոչ մեկի տիրույթների մեջ, այլ անկախ էր: Խնդիրն այն է, որ եթե այդ իշխանությունը ենթակա լիներ Բազարատ Բազրատունուն, ապա նա Կղարջքի հոգևոր իշխանությունը պարզապես կպարտադրեր տեղի բնակչությանը: Մինչեւ Գեորգի Չորչանեցին, Կղարջքի հոգևորականների՝ Սամցխեում գտնվելու մասին տեղեկանալով, ինքը նրանց հրավիրեց իր մոտ: Նա այդ արեց գուտ հոգևոր իմաստով և ոչ թե ընդունելով Կղարջքի Բազրատունիների իշխանությունը: Ինչպես տեսանք, Գուառամ Բազրատունին, որը տիրում էր Սամցխեի որոշ հատվածների, հակառադում էր Գրիգոր Խանձրեցու հոգևոր իշխանությանը: Կարծում ենք, որ Սամցխեում գտնվող այն իշխանությունը, որտեղից Սերապիոն Զարզմեցուն Վտարեցին, նույնպես կամ անկախ իշխանություն էր և կամ ենթակա Գուառամ Բազրատունուն:

Խոսելով Գեորգի Չորչանեցու իշխանության մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի կարևոր իրողության: Ըստ Վասիլ Զարզմեցու՝ իշխանանիստ Զանավ ավանի (գտնվում է Չորչան բնակավայրից հյուսիս) մայր Եկեղեցին կառուցվել էր Անասավի և Քուրդիի կողմից<sup>51</sup>: Անենայն հավանականությամբ՝ այդ անվանումների ներքո պետք է հասկանալ Համազասպ և Քուրդիկ անունները: Թեև Համազասպ անունը տարածում ուներ նաև Վիրքում, սակայն Քուրդիկ անունը գոյություն ուներ բացառապես հայկական իրականության մեջ և միայն Մամիկոնյանների շրջանում, որոնցից Քուրդիկ Մամիկոնյանը հիշատակվում է IX դ. սկզբին<sup>52</sup>: Ուստի Քուրդիկ անվան կողքին Համազասպի հիշատակությունը կարող ենք վերագրել այն բանին, որ խոսքը երկու Մամիկոնյան իշխանների մասին է (Համազասպ անունը տարածում ուներ Մամիկոնյանների շրջանում): Բայց թե հատկապես ովքեր են նրանք Եղել, սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվարանում ենք ճշգրտել: Հայտնի է միայն, որ VIII դ. Երկրորդ կեսին, Երբ արաբական տիրապետության դեմ ապստամբեց Արտավազդ Մամիկոնյանը, նա սկզբում հեռացավ «ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նաև անենայն նախարարք աշխարհիս», արաբական զորքը հետապնդեց նրանց և հասավ «յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցխե. և կալեալ զկիրճսն՝ թափէր ապուր ինչ յաւարէն. և զնոսա վարեալ փախստական առնէր յաշխարհէս Յայոց»<sup>53</sup>: Արդեն ցույց է տրվել, որ Արաբական խալիֆայության Արմինիա վարչական միա-

<sup>50</sup> Տես Վասիլիй Զարզմելի, գլ. XVIII:

<sup>51</sup> Տես նոյն տեղը, գլ. XVII:

<sup>52</sup> Տես Թովմա Արծորունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծորունեաց, բնագիրը վ. Վարդանյանի, Եր., 1985, էջ 302, Տես «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 87:

<sup>53</sup> «Պատմութիւն Ղետնդեայ Մեծի վարդապետի Յայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138:

վորը բաժանված էր չորս մասի, որոնցից երկորորդ Արմինիայի մեջ էր մտնում Սամցխեն: Ղևոնդը Երկրորդ Արմինիայի մեջ մտնող տարածքները ընդհանուր առմամբ կոչում է Վիրք, քանի որ արար տիրողները Երկրորդ Արմինիայի մեծագույն մասը կոչում էին Վիրքի անունով՝ Զուրզան<sup>54</sup>: Այդ իսկ պատճառով Ղևոնդը Սամցխեն հիշատակում է Վիրքում՝ նկատի ունենալով Վիրքի մեծապես տարբերվող վարչատարածքային նիավոր Զուրզանը: Սակայն, եթե նշում է Արտավազդի հեռանալը Սամցխեից, նա պարզապես մեջ է բերում փաստացի վիճակը՝ «յաշխարհէն Հայոց»:

Սակայն խնդրո առարկայի համար առավել կարևոր է Ղևոնդի հաղորդման մյուս հատվածը. «...նոքա (իմա՝ Արտավազդ Մամիկոնյան և յուրայիններ - Ա. Ե.) Երթեալ պատսպարհին յաշխարհին Եգերացւոց. և ստանայր անձամբ (իմա՝ Արտավազդ Մամիկոնյան - Ա. Ե.) զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոց և ի վերայ Վեռիոյ, որ են Վիրք»<sup>55</sup>: Այն, որ հաղորդման մեջ նշված Վիրքը բուն Վիրքին չի վերաբերում, հաստատվում է այն իրողությամբ, որ այդ շրջանում Վիրքի մեծագույն մասը գտնվում էր Տփիսի ամիրայության կազմում և իրենից ներկայացնում էր սահմանային շրջան<sup>56</sup>: Եթե Եգրակացնենք, որ խոսք Սամցխեի մասին է<sup>57</sup>, կարող ենք կատարել ևս մեկ կարևոր հետևություն. Սամցխեում կարող էին հաստատվել Արտավազդ Մամիկոնյանի հետ Հայաստանից հեռացած իշխաններ, այդ թվում՝ Հանագասպ և Քուրդիկ Մամիկոնյանները, որոնց կառուցած վանքի շրջակայրում գտնվում էր տեղի իշխանների հանգստարանը: Մասնավորապես այնտեղ է թաղվել Գեղրդի Չորչանեցի իշխանը<sup>58</sup>: Այս եղրահանգումներն ունեն որոշակի թեականություն և կարող են հաստատվել կամ մերժվել առայժմ մեզ անհասանելի այլ սկզբնաղբյուրների տեղեկություններով:

Եթե քաղաքական թատերաբենից հեռացան Գուառամ Բագրատունին և նրա որդի Նասրը, նրանց տիրույթների մեջ մասն անցավ Հայոց Աշոտ Ա թագավորին (885-890)<sup>59</sup>: Սամցխեի նրանց տիրույթները, ամենայն հավա-

<sup>54</sup> Տե՛ս Ա. Եղիազարյան, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., 2010, էջ 57-58, 60-61, նույնի՝ «Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տեղության համակարգում», «ՊԲՀ», 2008, թիվ 3, էջ 198-199:

<sup>55</sup> Տե՛ս Ղևոնդ, էջ 138-139:

<sup>56</sup> Տե՛ս Masudi, I, էջ 203-204:

<sup>57</sup> Կ. Թումանովը կարծում է, որ Արտավազդից կարող էին սերել Լիպարիոյանները, որոնց ներկայացուցիչն էր Թուեղիք տեր Լիպարիդ Բաղվաշը (տես Toumanoff C., The Mamikonids and the Liparitids.-“Armeniacata”, Mélanges d’Études Arméniennes, Venice, 1969, էջ 129): Այդ պարագայում պետք է ընդգծել, որ Ղևոնդի վիրք անվան ներք պետք է հանդես գար Արգվերը (գտնվում էր Ղվիրիլա գետի և Արգվերի կամ Լիխի լեռնաշղթայի միջև, - Երեմյան Ս., Հայաստան ըստ «Աշխարհացոյցի», Ե., էջ 39), որտեղից Թուեղիք էր տեղափոխվել Լիպարիդը: Ըստ «Քարթիի մասյանի»՝ այդ հրատարձությունը տեղի է ունեցել 876թ. (տես “Մատիանե Կարտլիսա”, էջ 31): Այդ տեսակետը չի հակասում մեր կարծիքին, որովհետև հնարավոր է, որ Արտավազդի իշխանությունը, քաղի Սամցխեից, Բյուզանդիայի կողմից ճանաչված լիներ նաև շրջակա Երկրամասերի, այդ թվում՝ նաև Արգվերի վրա:

<sup>58</sup> Տե՛ս Վասiliй Զարզմելի, գլ. XVII:

<sup>59</sup> Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայ-ափխազագական պատերազմները IX դարի 80-ական թվականներին և Կղարջքի կյուրապաղատությունը, «Բազմավեպ», 2009, էջ 186-192: Դատելով «Քարթիի մատյան»-ի և Վախուշտի Բագրատիոնիի տեղեկություններից՝ Գուառամը իր տիրույթների մեջ մասը ճախկինում ստացել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունոց, քանի որ ամուսնացել էր նրա դստեր հետ (տես «Մատիան Կարտլիս», էջ 31, Վախուշտի Բագրատուն, էջ 187):

նականությամբ, անցան կամ Կղարջի Ատրներսէի Բագրատունի իշխանին և կամ Սամցխեի մյուս իշխանություններին: Առավել հավանական է երկրորդ հնարավորությունը, քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, Սամցխեի իշխանությունները պահպանեցին իրենց ինքնուրույնությունը նաև հետագայում:

Դատելով Մասուդի տեղեկություններից՝ X դ. առաջին կեսին Սամցխեն վերածվեց առանձին թագավորության: Արար աշխարհագրագետը, որ եղել է Զայաստանում, նաև ավորապես տեղեկացնում է. «Զուրզանների (ինա՞ Վրաց - Ա. Ե.) թագավորության կողքին գտնվում է Սամսախի (ինա՞ Սամցխե - Ա. Ե.) կոչվող թագավորությունը: Բնակչությունը խառն է՝ քրիստոնյա և հեթանոս»<sup>60</sup>: Յեղինակը Սամցխեի թագավորությունը հիշատակում է Վրաց թագավորությունից առանձին, իսկ ինչ վերաբերում է բնակչության՝ քրիստոնյա և հեթանոս լինելու իրողությանը, ապա այն կարելի է հասկանալ ինչպես բարի բուն ինաստով, այնպես էլ որպես հայադավան և վրացադավան բնակչության առկայության վկայություն, քանի որ վերջիններս միմյանց հաճախ պարզապես կոչում էին «հերետիկոս», «անհավատ» և այլն:

Մեր քննությունը ցույց տվեց, որ Սամցխեում IX դ. աստիճանաբար հանդես է գալիս առնվազն երկու ինքնուրույն իշխանություն:

Անփոփելով կարող ենք նշել, որ Գրիգոր Խանճառեցու կողմից քաղկեդոնական վանքերի և Եկեղեցիների հիմնադրումը IX դ. առաջին կեսին հովանավորում էին Կղարջի կուրապաղատները, և աշխարհագրական առումով ընդգրկում միայն Կղարջը: Բացի այն, որ Կղարջի հոգևորականները ձգտում էին քաղկեդոնականությունը տարածել Կղարջի լուսավորչական հայերի շրջանում, IX դ. 60-ական թթ. նրանք փորձ կատարեցին իրենց իշխանությունը տարածելու նաև հարևան Սամցխեում, սակայն հաջողության հասան միայն մասամբ: Քաղաքական առումով Սամցխեի իշխանությունները Կղարջի կուրապաղատությունից որևէ կախում չունեին: Սամցխեի որոշ շրջանների տիրող Գուառամ Բագրատունին հակադրվում էր Կղարջի հոգևոր իշխանությանը՝ այդ գործընթացում կարևորություն տալով Սամցխեի հոգևորականներին:

**АРМАН ЕГИАЗАРЯН – *O некоторых вопросах истории Кларджка и Самцхе в IX веке.*** – Начиная с правления Ашота, курапалата Кларджка (конец VIII в. – 826 г.), строительство церквей и монастырей в названном курапалатстве достигло большого размаха. Тон этому задал Григорий Хандзтийский, ставший здесь впоследствии духовным лидером. Преуспев с церковным строительством, духовенство Кларджка постепенно распространяет свою власть и на соседнюю область – Самцхе.

Строительство Григорием Хандзтийским халкедонских монастырей поддерживалось курапалатами Кларджка, хотя в первой половине IX века географически оно не выходило за пределы подвластной им территории. Но в 60-е годы здешнее духовенство попыталось распространить свою власть и в Самцхе, достигнув, однако, лишь относительного успеха. Политические власти Самцхе не зависели от

<sup>60</sup> Տե՛ս Masudi, I, էջ 204:

Кларджского куралатства, и владетель отдельных районов этой области Гуарам Багратид открыто противостоял духовной экспансии Кларджка.

**ARMAN YEGHIAZARYAN – *On some Issues of History of Kgharjk and Samtskhe in IX century.*** – Since the governing period of europalate Ashot of Kgharjk (the end of VIII century – 826) the construction of churches and monasteries in Kgharjk europalate, proceeded on a grand scale; it was initiated by Grigor Khandztetsi, who, as a result, became the local spiritual leader. After the realization of work on church building in Kgharjk the local clergy started to extend the power in neighbouring Samtskhe as well.

The construction of Chalcedonian monasteries by Grigor Khandztetsi in the first half of IX century was supported by Kgharjk europalate and in the geographical plan spread only in Kgharjk. Besides, the clergy of Kgharjk aspired to spread Chalcedonism among the enlightened Armenians of Kgharjk, but in the sixties of IX century they made an attempt to extend power in the neighbouring Samtskhe as well. However, they achieved relative success. From the political point of view, the authorities of Samtskhe didn't depend on Kgarjk europalate. The ruler of some districts of Samtskhe - Guaram Bagratuni resisted the spiritual power of Kgharjk, attached importance to the clergy of Samtskhe in this process.